

7845

ան. Գր. 6

ՔԱՂԱԾ ՓԵՍԱՆԵՐԸ

b b

ԳԵՕԳԱՐՉԻՆԻ ԲՈԼԱՆ

ԱՄԲԱՏ Ո. ԳՈՐԾՈՅ

(Մի զիջ զամախսյ կեանքից)

891.99

գ-34

ԲԱԴԱԿ

Ցպարտն Ա. Մ. Պաղարհանի

1998.

# БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.

Возвращайте книгу в  
срок, чтобы и другие  
могли воспользоваться  
ею.

891.99  
Հպատ. Գր. Յ. Տ. Հ. Հ. Հ.  
Գ-34  
Հ 529  
Հ 5867

ՔԱՂՑԵՑ ՓԵՍԱՆԵՐԸ  
ԳԵՕԳԱՐՉԻՆԻ ՔԱԼԱՆ

ՍՄԲԱՏ Մ. ԳՈՐԾՎՈՅ

Центральная Сиб-ка им. Ленина  
город Бары  
ИНВЕНТАРИЗАЦИЯ 1936 г.

№ \_\_\_\_\_

2003

ԲԱԳՈՒ  
Տպարան Ա. Մ. Հաղարեանի  
1898.

2084



Փռքընկ

ԱՐՄԵՆԱԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ

---

Дозволено Цензурою  
Тифлисъ, 10 Октября 1898 г.

---



ՅԱՀԲԱԶԵԱՆԻՆ

Կուիրում է

ՀԵՂԻՆԱԿԻ:

Ա.



146  
III

—Ա՛ Գէօզալ աղաբաջի, լիսալ ամ  
Սիմոնիթ հետի ախչիկ ես ուզում. դէ  
ասա քացախ խմանք էալի<sup>1)</sup>) . . .

—Հա եա..., ա նարգիզ, արախիս  
հետի ուզում ամ մին ախչիդ ուզամ,  
բէալքանամ<sup>2)</sup> աշկ-իրեսը վերայ հաւաք-  
վի, եօխսանամ<sup>3)</sup> ), մի քանի տարի ալ ան-  
ցկանայ, էալ տուն հաւաքվիլ չի իլիլ.  
իմ ալ աշկս մին նրա եա տեսնըմ, մնա-  
ցածը չիմ քածարմատ ան . . .

Լայն, ծաղկազարդ բակում կանգնած  
խօսում էին երկու կանալք: Նոքա հագ-  
նուած էին պարսկական ձևով: Գէօզալ

<sup>1)</sup> Քացախ խմենք—ուզում է ասել՝ ախոր-  
ժակ պատրաստենք: <sup>2)</sup> Գուցէ: <sup>3)</sup> Թէ չէ,

աղաբաջին հագած էր կապտագոյն հասարակ չթից ալխալուզ և լայն փոխան (ոտաշը). գլխին ունէր կապած մետաքսից կարած ճուպպա<sup>1)</sup> և վրալից ծածկած էր սև շալ, ոտներին ունէր հագած կանաչ քօշեր: Իսկ նարգիզը, որ մի մանկահասակ կին էր, ունէր հագած մի չապկեան<sup>2)</sup>, մազերը նոյնպէս ծածկած ճուպպալով. շալի փոխարէն կար գլխին կանաչ քեալաղալիք<sup>3)</sup> իսկ ոտներին քօշերի փոխարէն՝ նոր ձեւի կօշիկներ:

— Հա են, ուզի տեսնանք, — ասաց նարգիզը, — Եօխսանամ տիւ չուզես, ես չուզամ, էանմինը չուզի, բէտս էտս քաղաքի ախչիկերքոնց ճարը հինչ բիդի իլի՛.. Ետն քիշերը հեսաբ ամ անըմ երեսունը հինգ ախչիկ ուզելի տղալ կայ, համա<sup>4)</sup> հառնւը օխտանասունի երկու ախչիկ. հէանց թէաք մեր մէտահլիմը<sup>5)</sup> տասնը մինը կալ. բէտս տրանց ճար կիլի՛, էտ

<sup>1)</sup> Գլխոց. <sup>2)</sup> Կարճ և ամառուայ ալխալուզ.  
<sup>3)</sup> Գլխի մետաքսի ծածկոց. <sup>4)</sup> Բայց. <sup>5)</sup> Թաղ.

քուչի<sup>1)</sup>) տուռնան ցեք չան քաշըմ...  
— Զէեա, ես էանանց ախչիկերք չամ ուզուլիւ, — ասաց Գէօզալ աղաբաջին, ընդհատելով նարգիզի խօսքը, — քաղաքի ախչիկերքոնց շվթը<sup>2)</sup>) տիւս ա եկալ, երեսներին միտիկ անելի չի, մարթի զահլան ա քինէամ, որ թահար — թիւլիրներին<sup>3)</sup> միտիկ ես անըմ, վարսները (մազերը) կարւածները անքան ալիքք - քրշան<sup>4)</sup> ան քիսիմ քի, կասես մէլմունի<sup>5)</sup> պոօշ իլի, անքան կէարմուրումայ: Զէ, չէ, ես իմ արախիս կրակի մէչ չամ քիցիլ: Ես մին էանանց ախչիկ բիդի ուզամ քի, եղ թափի, մեզը հաւաքի, մեզը թափի, եղ հաւաքի. մին խօսքով իրեսըմը ճէաշ (փլաւ) ուտիլ իլի, Եօխսանամ քար պերողանց ախչիկան պէս... չոփուռ<sup>6)</sup>), իրեսին անքան զահիրմար ա քիսիմ քի, կասես հէլլի իլի, մարթի շվքելը մէշին իրեւըմ ա. նա քնատեղան վերկանալիս Սիմօնս

<sup>1)</sup> Փողոց. <sup>2)</sup> Համը. <sup>3)</sup> Կերպարանք <sup>4)</sup> Գոյն-զպոյն զեղեցկացնող դեղեր. <sup>5)</sup> Կապիկ. <sup>6)</sup> Զեշոտ.

լղաճաք կելի...

— Հայիֆ նրանա, մանագ նա չի քի,  
— խօսեց Վարդանուշը, որ նոր էր մաս-  
նակցել նրանց խօսակցութեան, — հետ-  
րանա՛, Զամբախի ախչիդը, լիւսնահակ  
կասես ելի, քիթ - պոօշան մարթի իւել-  
քն ա քինէամ...

— Նատ լէաւ ա, Գէօզալ աղաբաջի,  
— ձայնակցեց Վարդանուշին նարդիզը, —  
գէօզալ, — գոչագ<sup>1)</sup> ), իսկի պակասութուն  
չունի, խօսիլիս պէարանտն կաթնի հօտ  
ա կէամ:

— Չէ, նրա չամ ուզիլ, — ասաց Գէօ-  
զալը գլուխը թափահարելով:

— Իէ Կէակուշի ախչիդան ուզի:

— Չէ, նրա եալ չամ ուզիլ. խօսե-  
լիս շուտ շուտ էա խօսում:

Գէ Ծաղիքի ախչիդան, էալ նրաքի  
խօսք չունես:

— Նրա եալ ասրման հադիրաջո-  
ղաբ<sup>2)</sup> ա.

1) Գեղեցիկ. 2) Մեծի խօսքը չ'լսող.

Այդ ժամանակ Վարդանուշը քթի  
տակ ծիծաղում էր, մտքում ժողովելով  
քաղաքի ամենալաւ օրիորդների անուն-  
ները, որպէս զի իմանալ Գէօզալի միտ-  
քը, թէ ինչու այդ աղջկերանց անունը  
արատաւորում է: Ակամալից մտածում  
էր Վարդանուշը, թէ անպատճառ մի  
նպատակ ունի, որ ոչ մէկին հաւանու-  
թիւն չէ տալիս:

— Եաջաբ մտկըս ընկաւ, — կրկին խօ-  
սեց Նարդիզը. — տերացու Ղուկասին մին  
լէաւ ախչիդ ունի. հէար սարք, կարքը  
իմանըմ ա: Դիւզն էամ ասըմ, Գէօզալ  
աղաբաջի. տիւ իմանըմ ես քի, Սիմօնիթ  
Օսանիս բարաբար (հաւասար) սիրիմ է-  
ամ. էագանամ երկու գիրվէանքա միս  
իլի տունըմը, նրանա չորս ջուռա<sup>1)</sup> խօ-  
րակ<sup>2)</sup> կ'հեփի. բէալքանամ մի քանի զո-  
նաղներ<sup>3)</sup> ալ յեղի անի<sup>4)</sup>):

— Եան ախչիդան ինձ խօսք չունամ,

1) 2որս տեսակ. 2) Կերպակուր. 3) Հիւրիր.  
4) Ճանապարի դնի.

լէաւ ախչիդա, — ասաց Գէօզալը, համատղաս ասըմ ա քի՝ «գորդի» ա...»

— Ա. Գէօզալ աղաբաջին, — ասաց Վարդանուշը, — Շամախիմը հինչն ա շատախչիդերը. հէարանա՛ Միւլքումանց Գէաստագիւլը, Մանչմանց Վարդուհին, Քէասպարանց Խանըմը, Մնացականոնց Ոսկին, մին խօսքով՝ անքան լէաւ ախչիդերք կան քի կասես թուշներան կըրակ ա տիւս կէամ, մայիսվան վառթ կասես Ելան, նրանցանա մինը ուզի էալի:

— Ա. կնանիք, տիւք լափ ինձի չաշմիշ արիք<sup>1)</sup> բէագանամ ես Խօլեցի<sup>2)</sup> եամ քի, ախչիդ չի ճնանչամ: Ես Սիմօնիս հետի մին ախչիդ էամ ուզիլի քի, լափ «գէօզէարչինի բալա» իլի (աղաւնու ձագ) «գէօզէարչինի բալա» եամ ասըմ է, որ առաջիս շուռ կէալիս, հէանց իմանամ քի հրշարագ ա, գէ անանց ախչիդ էալ

1) Մոլորիցների: 2) Պարսկաստանի Խօլ քաղաքածներին Խօլեցի անունն են տալիս. — իրրի չ'հասկացողներ:

մեր Շամախիմը հօրդեղան ա...»

— Բէաս էանանց ախչիդ հօրդեղան բիդի ուզես քի, «Գէօզէարչինի բալա» իլի, — հարցըեց Վարդանուշը:

— Ես մինը քիթէալամ քի, լափ կասես հիւլի (մէալաք<sup>1)</sup>) իլի, — պատասխանեց Գէօզալը:

— Ա. Գէօզալ աղաբաջին, գէ ասաւ տեսնանք՝ հով ա, մեք ալ ուրախանալու եանք ալի՛, չուզողի բարագը տիւս կէալ, — ասաց Նարգիզը:

— Ա. կնանիք, ուզում էք տնազ արեցէ՛ք<sup>2)</sup>, ուզում էք թէարիֆ<sup>3)</sup> մէասալան ասըմ ա՝ «միսը միս էա ճուրն էալ աշքի լիւս ա», հիմի ես մին ախչիդ էամ քիթէալ քի, ախչիդը ախչիդ էա, փողն ալ քի՝ փող: Երկու հաղուղի բաղ ունի, տասսը թաղար ցորանի տափ, երկու քիթիլի կով, քսան գանա հաւ, վեց լառի խօրուզ<sup>4)</sup>), Ք. գիւղի պէս տե-

1) Գեղեցիկ հրեշտակ: 2) Ծաղկեցէ՛ք: 3) Գողեցէ՛ք: 4) Մեծ և կոսուով արարադ:

զըմն ալ՝ տուն, տեղ, բէանդ, բոխչա,  
իլէած չ'լէած . . . էալ տրանա եվալ  
հինչ էք ուզում, — ասաց Գէօզալը ծի-  
ծաղելով:

—Ա՛ աղաբաջի, էաջաբ օվ ես ա-  
րալ. մին ասի տեսնանք, էաս ախչիգը  
հով ա քի, էաթանց ռաստին ա ընդալ:  
Սիմօնիթ բախտը պէացվալա էա, — հար-  
ցրեց Վարդանուշը հետաքրքրուելով:

—Ախչիգը իմ տալոնչս տոքոր ախ-  
չիգն էա, — պատասխանեց Գէօզալը:

—Աբալամ, նա չ'հասա քի, — խօսեց  
հանկարծ Նարգիզը.

—Քու պէրանըթ հօտի, — ասաց Գէօ-  
զալը, — հանց գիւշման օջաղ բաշնդա ա  
քի (թշնամին հերթիկի գլսին է):

Ալպէս երեք հոգի խօսելուց յե-  
տոյ, ամեն մէկը գնաց իրենց տուն .  
Գէօզալի սիրտը չէր հանդարտում, նա  
մտածում էր, թէ՝ ինչո՞ւ ուրիշների մօտ  
օրիորդի տեղը ասաց, գուցէ նոքա չա-  
րախօսութիւն անեն ազգակցութեան մա-

սին, կամ թէ աւելի հարուստ և լաւ  
բարեկամ տղայ ունենան և նրա համար  
ուզեն, մանաւանդ որ չ'հասէ: Նա ինքն  
իր խօսելով, կասես թէ, մի չար ապա-  
գայ էր գուշակում:

Գէօզալը մի արհեստաւորի կին էր,  
ինքնահաւան և երեսակայութեան ցնոր-  
քների մէջ ապրող անձնաւորութիւն: Նա  
շատ էր սիրում հարստութիւն, որպէս  
զի ուրիշ կանանց շարքում պատիւ ու  
յարգանք վայելէ: Բայց որտեղից կարող  
էր հարստանալ, քանի որ նրա ամուսի-  
նը հազիւ էր կարողանում իւր տասը  
գլխից բաղկացած լնտանիքի առօրեայ  
հացը հալթհալթել: Իսկ Սիմօնը, նրա  
որդին նոյնպէս մի արհեստաւոր տղայ  
էր, որ մի կին պահելու հազիւ թէ ըն-  
թունակութիւն ունենար:

## Բ.

Ալդ օրից անցել էր մի քանի ամիս,  
բայց Վարդանուշը ալդ ժամանակի ըն-

թացքում աշխատում էր միշտ չարութիւններ անել, թէ հոգեսրականների և թէ քաղաքի հեղինակաւոր մարդկանց մօտ, որպէս զի չհասութեան պատճառով նրանց ամուսնութիւնը չ'աջողութիւնամար Սիքովի համար ուզել: Խակ նարդիզը, որ մի միամիտ կին էր, անզգուշութեամբ իւր մօրաքրոջ մօտ սկսեց Գէօգալի մտադրութիւնը պատմել: Նա ունէր մի քրոջ որդի, որը նոյնալիս ամուսնալու ժամանակն էր: Մօրաքրոջ մտքով անցնում էր իւր քրոջ որդու համար յաջողացնել և այդ մասին ամեն ճիգ թափում էր, որ Սիմօնի համար չ'աջողութիւն:

Չ'հասութեան ձայնը արձագանք էր ստացել քաղաքի բոլոր անկիւններում, լսել էր և Թեմական առաջնորդը, որը ամեն անդամ գուռոք ճոռավիս կարծում էր, թէ կաշառք են բերում պատմաթուղթ ստանալու համար:

Անցաւ ևս մի քանի շաբաթ: Մի օր, Ք. գիւղը գնաց Վարդանուշի եղբայրը և ամուսինը, որպէս զի «գէօգէարչինի—բալին» նշաննեն: Միւնոյն օրը նարդիզի մօրաքրոջ որդին, Նապիանց Գրիգորը, Տէրտերանց Մինասը, Տըրիպականց Սաղաթէլը և Զաթուանց Լեռնը՝ իրարուց անտեղեակ, կառք նստեցին ամենմէկը մի—մի հեղինակաւոր մարդու հետագնացին նոյն գիւղը, միւնոյն նողատակով:

Նըանցից ամեն մեկը միւսից կէս ժամ յետով հասնում էր «գէօգարչինի բալի» ապարանքը, որոնց գալու պատճառը մինչև հարցնելը կամ իմանալը ընդունում էին պարսկական ճաշակով զարդարած մեծ և հոյակապ դահլիճում: Երբ նոքա բոլորները հաւաքուեցին, թուով 20 հոգի էին: Մի ամբողջ ժամ լրութիւն տիրելուց յետով տան տէրը, որ օրինորդի բարերարն էր կոչում, իւր հետաքըլութեանը բաւականութիւն տալու

Համար, սրա և նրա երեսին նայելով՝  
հարցրեց.

— Ձեզ մատաղ, խէր ա ծեր ըթանց  
բէղափ<sup>1)</sup> կէալը...

Խնքնակոչ հիւրերը մի քանի վալրկեան  
իրարու երեսին խեթ-խեթ նայելուց յե-  
տու, Տէրտերանց Մինասի հետ գնացած  
ներկայացուցիչը, բոլորից առաջ ցոյց տա-  
լով նշանուող Մինասին՝ ասաց.

— Մենք եկել ենք գինի առնելու,  
բայց որովհետեւ լսել ենք, որ ձեզ մօտ  
լաւ գինի կալ, ուստի ուզում ենք նախ  
ձերը առնել, ապա ձեր խորհուրդով ու-  
րիշնը, իսկ ինչ վերաբերում է մնացեալ-  
ների գալուն, ես չգիտեմ պատճառը...

Մնացեալ հիւրերը մնացել էին ապ-  
շած: Նրանցից մէկը կարմրում էր, միւ-  
սը սպրտնում, երրորդը քրտնում մի  
խօսքով մի աննկարագրելի շփոթութեան  
մէջ էին գտնուում նշանուող երիտասար-  
դները հանդերձ իրենց ներկայացուցիչը

<sup>1)</sup> Ցանկարձ.

ներով: Նոքա չ'գիտէին՝ ինչ պատասխա-  
նեն տան տիրոջ հարցին: Բանիմաց շիր-  
ուանցիք արդէն հասկացել էին իրարու  
ներկայութիւնը, բայց հարկաւոր էր մի  
կերպ և առերես մտադրութիւնները փո-  
խել, ուստի Տրիպականց Սաղաթէլի ներ-  
կայացուցիչը դառնալով դէպի տան տէ-  
րը, ցոյց տալով Սաղաթէլին՝ ասաց.

— Մենք եկել ենք ձեր գիւղի իւգ-  
րաշու<sup>1)</sup> մօտ մի քանի կարեւոր գործերի  
համար, բայց առանց ձեզ չենք ուզում  
տեսնուել, որպէս զի խնդիրներս ապար-  
դիւն չ'անցնի:

Այնուհետեւ տան տէրը տեսաւ, որ  
հիւրերից երկուսը իրան մարդու տեղ  
հաշուեցին, համարձակ կերպով դարձաւ  
դէպի մնացեալ հիւրերը.

— Ձեզ մատաղ, տիւք խէ ըք եկալ,  
դէ մին տիւք էալ ասեցէք տեսնանք  
էալի, մին հինչ զուլուզ կալ:

«Ի՞նչ անենք, — մարձում էին մաս-

<sup>1)</sup> Ցանկարձ.



ՀՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՀՀ ՀԱՅԱՍՏԱՆ  
ՏԱՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

եալ «քաղցած փեսաները», — էլ ուրիշ մի նշանաւոր խօսք չ'կայ, որ ասենք: Եթէ սուս ու փուս կ'թողնենք, դուրս կ'գանք, աւելի պիտի խալտառակուենք, եթէ ասենք աղջիկ ուզել ենք եկել, գուցէ մը նացեալներն էլ նոյն միջոցին իրենց նը պատակը լայտնեցին, այնուհետև խալտառակութիւն պիտի լինի... այն ժամանակ պիտի ասեն խնամիները մեզ, թէ՝ , — «գուք ոչ թէ աղջիկ ուզել էք եկած, այլ օժիտ տանելու» Կամ միթէ խնամիները չեն մտածիլ, թէ քաղաքի կրթուած և գեղեցկուհի աղջիկներից մէկը չեն տալիս այդ երիտասարդներին, որ այսօր սոքա կէս «դ իւժինը» միտափն են եկել մի անկիրթ գիւղացի աղջկայ համար... .

Օժիտ', — խաղողի այգինե՞ր... տասը թաղար ցորեն վարելու տեղ... մի ամբողջ տան կահ-կարասիք, տնեն, տեղ, կով, մանաւանդ կանխիկ փող... Այդ բոլորը մեր երիտասարդներին կաշկանդել

էին: Նոքա չէին ուզում աղջիկ տեսնել: Նոքա չէին կամենում երջանկութեան և հարստութեան մէջ զանազանութիւն գնել: Միթէ հարստութիւնը կարող է փոխարինել սիրուն, կամ սէրը հարստութեան... չէ որ այսօրուայ հարուստը վաղ բախտի շնորհիւ կարող է կոպէկների համար ձեռք պարզել երեկուայ մուրացկանին, որին շատ ժամանակ ինքն է իւր չաղ գրպանից ողորմութիւն տուել... Օրիորդը ինչ ուզում է, թող լինի, այդ նշանակութիւն չունի նրանց համար, թող անկիրթ լինի, թող ոչ չարը հասկանալ, ոչ բարին, ոչ նիստ ու կաց իմանալ և ոչ էլ քաղաքավարութիւն... Մինչեւ անգամ, ինչպէս շատ գիւղերում, որ մալրենի լեզուով էլ չեն խօսում, այդ էլ ոչինչ նրանց համար... Միայն թէ օրիորդը եկամուտի աղբիւրներ ունենալ, որից ինքը՝ ամուսինը օգտառի... Ահա թէ, ընթերցնել, ինչ էին մտածում մեր քաղաքի զարգաց ա ա ա ա ա ա երիտասարդ-

ները<sup>1)</sup>

Այժմ դառնանք գէպի նշանուղ-  
ները. Շապիանց Գրեգորը ասաց.  
—Ես ուզում եմ ալժմանից գիւղա-

<sup>1)</sup> Մենք խորհուրդ կտայինք մեր «сорочка»-ով, «զուտիք»-ով և «տլյառ»-ով երիտասար-դներին, որոնք, ինչպէս իրենք են իրենց կար-ծում՝ լուսաւորուած են, փոխանակ «որո-դան»-ի յետելից դնալու, որ ամենաաննշան տեին է բանում անկեղծ ամուսնութեան մէջ. Թնդ պսակուեն այն գիւղացի աղջիկների հետ, որոնք բիւր անդամ աւելի աղջիւ, մաքուր, գեղեցիկ, առողջ և բարյական են, քան թէ մեր՝ ներսում քինւական ըմ քինալու էամ, իսկ զբր-սում «կօրսէ»-ով, «զուտիք»-ով, «որչատկա»-ով, «տլյառ»-ով և այլ մօգաներին գերի դառած և գունատուած օրիորդները, որոնք մայրեր կարող են զառնալ միմիայն ցնորամիտ մօգաներին, այլ ոչ երեխաների; Բացի այն, որ լաւ տան տիկին-ներ կարող են լինել նորա, այլ և մեր երիտա-սարդները ծառայած կ'լինին աղջիւ իդէպի, որը իբրև լոկ բառեր, քամու ազգեցութեան են ծառայում, այլ ոչ մարդկային կեանիր բարգա-ւաճման :

Ծ. չ.

ցիներին փող բաժանեմ, որ խաղողի ժա-  
մանակ սկսեմ խաղող ժողովել, մտադր-  
ուել եմ, բաժանած փողիս էլ շահ չառ-  
նել . . .

—Ես էլ, պարսն Յակոպ (տան տի-  
րոջ անունն է), ասաց Զաթուանց Լե-  
ւոնը, —երկու կթելու կով պիտի առ-  
նեմ կամ ձեզանից, և կամ ձեր խորհր-  
դով ուրիշներից:

Սյդպէս ամեն մէկը մի մի պատ-  
ճառ գտնելով, իբր թէ արդարացրին  
իրանց: Նշանուողների մէջ մնացել էր  
մէկը միայն, որ սառը քրտինքի մէջ կո-  
րել էր շատ մտածելուց և շուարելուց,  
բայց, գժբալտաբար, միտքը ոչինչ չէր  
ընկնում: Վերջապէս Յակոպ ապէրի  
լուրջ հայեացքը, որ ուզզել էր դէպի նա,  
ստիպեց նրան գոնեա բերանը բացել,  
յուսալով, որ Աստուած մի քանի խօսք  
կը շնորհի իրեն.

—Ե՛... ս... ը... ը... ուզում... մ...  
բայ կտրել...

Վերջին երկու բառերը նա այնպէս  
պարզ արտասանեց, որ բոլորեքեան մնա-  
ցին ապշած: Խեղճ տղալ, ինքն էլ չէ հաս-  
կացաւ, ինչ ասաց: Փոխանակ ասելու՝ «Ես  
էլ ուղում եմ բաղ առնել», ասում է,  
«Բաղ կտրել», երբ Ք. գիւղացիների ա-  
մենասիերիմ թշնամիներից մէկն է բաղ  
կտրողը, կտրաս կոտրողը և խօսի, ցո-  
րենի գէղ ալրողը: Եթէ գիւղի իւղբաշին  
(տանուտէրը ներկալ լինէր, անմիջապէս  
փեսացուից արձանագրութիւն կկազմէր:

Սլդ ժամանակ նրա հետ գետցած  
ներկայացուցիչը ամօթից այնքան կարմը-  
բել էր, որ գլուխիք մինչև ծնկները քարշ  
էր գցել: Յակոպը բոլորից շատ էր շու-  
արել: Նա երեսն դառը « չուբուխ »  
էր ծխուծ, երեսն էլ դուրս էր գալիս  
բակը և ինքն իրեն ասում. « Տէ՛լ Առ-  
տուած, այդ ինչ երազ է... մեր տանն  
եմ, թէ ուրիշ տեղ, քնած եմ թէ ար-  
թուն... Գէս պարծենում էլ են, թէ քա-  
ղաքացի ենք, ուսումով ենք, գրել ջըն-

ջել կարողանում ենք: Բայց ոչ մէկի  
խօսքերից բան չի հասկացավ... Մնացել  
էին շուտարած նաև տան կանալք և  
աղջիկները, զանազան մտքեր անելով,  
թէ, տեսնես ի՞նչ փորձանք է պատահե-  
լու մեջ, որ քաղաքից այդ մարդիկ թա-  
փուել են մեր առն... .

Վերջապէս խեղճ Յակոսկը ոչ մի  
եզրակցութեան չհասնելով, վերջին ան-  
դամ տուն մտնելով ասայ.

- Խոզէիններ, ասօր ինձ մշար պարթի չի լիւսացաւ, լւաւ կնէք, վէր ասօր քինաք, էքուց հինչ դուլլուղ ունիք, հմեցէք...

« Քաղցած փեսաները » և ապշած  
ներկայացուցիչները մի վայրկեան իրարու-  
թեատրին նայելուց յետով, մի ակնթարթում  
բարձրացան տեղներից և տան տիրոջից  
ներողութիւն խնդրելով՝ դուրս եկան:

Քաղաքից գիւղ տանող լայն և ծաղկազարդ ճանապարհով նոքա իրավու յետեւից կառքով քաղաք գնալիս, պատա-

Վերջին երկու բառերը նա այնպէս  
պարզ արտասանեց, որ բոլորեքեան մնա-  
ցին ապլշած: Խեղալ, ինքն էլ չի հաս-  
կացաւ, ինչ ասաց: Փոխանակ ասելու՝ «ես  
էլ ուզում եմ բաղ տռնել», ասում է,  
էլ ուզում եմ բաղ կանել», երբ Ք. գիւղացիների ա-  
«բաղ կարել», Երբ Ք. գիւղացիներից մէկն է բաղ  
մենասիներիմ թշնամիներից մէկն է բաղ  
կտրողը, կարաս կոտրողը և խօսի, ցո-  
րենի գէզ արողը: Եթէ գիւղի իւղբաշին  
(տանուտէրը ներկաւ լինէր, անմիջապէս  
փեսացուից արձանագրութիւն կ'կազմէր:  
Սլդ ժամանակ նրա հետ գնացած  
ներկայացուցիչը ամօթից այնքան կարմը-  
րել էր, որ գլուխը մինչև ծնկները քարշ  
էր գցել: Յակոպը բոլորից շատ էր շու-  
արել: Նա երբեմն դառը «չուբուխ»  
էր ծխում, երբեմն էլ դուրս էր գալիս  
և ինքն իրեն ասում: «Տէ՛լ Աս-  
քակը և ինքն իրեն ասում: «Տէ՛լ Աս-  
քակը և այդ ինչ երազ է... մեր տանն  
տուած, այդ ինչ երազ է... մեր տանն  
եմ, թէ ուրիշ տեղ, քնած եմ թէ ար-  
թուն... Դէս պարձենում էլ են, թէ քա-  
ղաքացի ենք, ուսումով ենք, գրել ջըն-

չել կարողանում ենք: Բայց ոչ մէկի  
խօսքերից բան չի հասկացար»... Մնացել  
էին շուարած նաև տան կանալք և  
աղջիկները, զանազան մտքեր անելով,  
թէ, տեսնես ի՞նչ փորձանք է պատահե-  
լու մեզ, որ քաղաքից այդ մարդիկ թա-  
փուել են մեր առւն...»

Վերջապէս խեղճ Յակոպը ոչ մի  
եզրակցութեան չ'հասնելով, վերջին ան-  
գամ տուն մտնելով ասաց.

— Խօզէիններ, ասօր ինձ մհար պա-  
րի չի լիւսացաւ, լէաւ կնէք, վէր ասօր  
քինաք, եքուց հինչ դուլլուզ ունիք,  
հմեցէք...

«Քաղցած փեսաները» և ապշած  
ներկայացուցիչները մի վալրկեան իրարու-  
երեսին նայելուց յետով, մի ակնթարթում  
բարձրացան տեղներից և տան տիրոջից  
ներողութիւն խնդրելով՝ դուրս եկան:

Քաղաքից գիւղ տանող լայն և ծաղ-  
կազարդ ճանապարհով նոքա իրարու յե-  
տեսից կառքով քաղաք գնալիս, պատա-

Հեցին Գէօգալին և Սիմօնին, որոնք գիւղն էին գնում, տանելով իրենց հետ նշանի մատանին, կարմիր կօշիկներ և մի թաշկինակի մէջ քաղցրաւենիք:

Փեսաները հասան քաղաք, իսկ Գէօգալը և Սիմօնը գիւղ: Գիւղի խնամիները նրանց պատուով ընդունելուց յետոյ, Գէօգալը մատանին իւր ձեռքով անցկացրեց «Գէօգարչինի-բալի» մատին, իսկ Սիմօնը՝ թաշկինակը տուաւ աղջկայ ձեռքը և կօշիկները դրեց առաջին: Այդ օրը և գիշերը նոքա մնացին գիւղում իսկ միւս օրը առաւօտեան վերադարձան քաղաք:

### Պ.

Խնամիները Գէօգալին պատմել էին հիւրերի ներկայութիւնը, որոնց ինքը պատահէլ էր ճանապարհին: Նա ամեն բան հասկացել էր արդէն, ուստի քաղաքում սկսեց աւելի ճիշտ և մանրամասն տեղեկութիւններ իմանալ: Եթի նա

իմացաւ, որ այդ ելքիները<sup>1)</sup> մի քանի անգամ ևս գնացել են գիւղը աղջկայ բարերարներին Սիմօնի համար չարախօսելու, բայց և այնպէս չէր յաջողուել ընդունուած մատանին յետ ուղարկել տալ, այնուհետև Գէօգալը այլ ևս չկարողացաւ անտարբեր վերաբերուել գէպի չարախօսները: մանաւանդ գէպի Վարդանուշը, որին ամեն օր մի քանի անգամ պատահում էր:

Վարդանուշը մի մանկահասակ կին էր, նա ունէր մի ծեր արհեստաւոր աղքատ ամուսին և չորս աղջիկ, վերջինները դժբաղտ հօրը մեծ ցաւ էին պատճառում, իսկ Վարդանուշը այդ մասին երբէք չէր մտածում, այլ իւր լայն բերանը բացած, այստեղ այնտեղ սկսում էր շամախեցի կանանց լատուկ բամբասնքներով իւր օրը անցկացնել:

Մի օր, հարեւանի տանը հաց թիւելու ժամանակ, ինչպէս սովորութիւն է

<sup>1)</sup> Հարսնախօս:

նրանցում, հարկան կանալք կ'հաւաք-  
ուեն օգնելու, լանկարծ թռնրի վրայ  
պատահեցան Վարդանուշը և Գէօզալը:  
Վարդանուշը լեզուի կողմից շատ ճար-  
պիկ էր, նա գիտէր, որ ինչքան էլ մե-  
դաւոր լինի, այնուամենայնիւ կանանց  
մէջ, շնորհիւ իւր ճարտար լեզուի՝ կ'ար-  
դարանայ: Բայց վախենում էր, որ Գէօ-  
զալը հակառակ դէպքում ուժի գիմէ,  
որին Վարդանուշը ոչ թէ անկարող էր  
դիմադրել, այլ ազատուելը դժուարին էր:  
Ուստի ուզում էր մի կերպ հեռանալ,  
բայց դժբաղտաբար չ'եղաւ, չ'յաջողուե-  
ցաւ խեղձին: Հէնց նոր էր ուզում ա-  
ռաջի քալը փոխել, երբ Գէօզալը բըռ-  
նեց նրա ճուղպի ծալից և ասաց.

— Աքա, վարսիթ առնըմ<sup>1)</sup> մնայ, մին  
խտեղ կաննի էա, քեզ ետնան պէտներ  
շատ ունամ. հէանց լէաւ էա քի, էաս  
վարսները սիստէագած կնանիքն էալ  
խտեղ ան...

1) Մաղերդ—ծամերդ արեան մէջ մնայ:

Վարդանուշի դէմքը մի ակնթար-  
թում մեռելի գոյն ստացաւ և սիրտը  
սկսեց անընդհատ բաբախել: Բայց երբ  
տեսաւ, որ Գէօզալը դեռ ճուղպի ծալ-  
ից ձեռք չի քաշում, մանաւանդ քաջ  
գիտէր, որ առանց զալմազալի չի վեր-  
ջանալու, փախչելու մտազրութիւնը փո-  
խեց և սկսեց ուշքը վերայ հաւաքելով  
ասել.

— Էալի հինչէա իլէալ, այ ազաբա-  
ջի, քի էաթանց հիւրսոտուալ ես... էա-  
թանց ես անըմ քի, շիրինի<sup>1)</sup> չի առնես  
մեզ ետի... հէալա աշկթ ալ լիւսի իլի,  
հէանց էարագի լիսեցի քի Սիմօնիթ նը-  
շանի մատանիքը տիրէալ ես: Ախրքի  
մէանագ — մէանագ նշան . . .

Դեռ Վարդանուշը իւր արդարացու-  
ցիչ ճառը չ'աւարտած, Գէօզալը զալրա-  
ցած ընդհատեց նրա խօսքը ասելով.

— Աքա, իսկի չի համանչեցիք քի,

1) 2) հիւրասիրես քաղցրաւենիքով.

զգըլ<sup>1)</sup>) տեղովդ վերկացար քովիէադ<sup>2)</sup>) մարթիթ, սիլ-ազար<sup>3)</sup>) ընդած ախպօրըթ խըրկեցիր ասքան լեղին<sup>4)</sup>), հինչէա-հինչէաքի, իմ հարսնացուիս ուղբս... բէաս տափը չ'մըտար, չ'տուրին, քօռը փեշման<sup>5)</sup> ետ թառաք... էան մին տափին դիպածները հէալա քինէացին-քինէացին, նըրանց տեսնամ քին ոսկոները երվի, ապադ-ճապաղին<sup>6)</sup> կէան, քեզ հինչ էր իլէալ քի, ան պառաւ մարթիթ խրկեցիր բէագանամ զոշութունըմն ալ էաթանց կանան: Թէւհ... քու սլկուած իրեսիթ... ախչիդ հայասզի հայասզ<sup>7)</sup>) . . .

Գէօզալը իւր բերանի սանձը չէր կարողանում հաւաքել, իսկ Վարդանուշը աշխատում էր բերանը բացել, որպէս զի իրան արդարաբացնի, բայց և այնպէս չէր լաջողում: Կանալք տեսնելով, որ Վարդանուշին շատ է նախատում և ան-

<sup>1)</sup> Կարմիր՝ անխիղն նշանակութեամբ <sup>2)</sup> ծեր.  
<sup>3)</sup> Թոքախատ. <sup>4)</sup> Ճանապարհ. <sup>5)</sup> Կորի գլուխ.  
<sup>6)</sup> Յանկարծամահ. <sup>7)</sup> Անպատկառ.

պատւում, նոցանից մէկը դարձաւ դէպի Գէօզալը և ասաց.

—Ա՛ թէահարսզ<sup>1)</sup>), մին լիւզիւթ քեզ քաշի տեսնանք, նա հինչ էա ասըմ ալի՞, հէանց մէանագ տիւ ես բլբոց տալու, մին էաջալան-մէաջալ<sup>2)</sup> չես տամ քի՛, էան խեղճն ալ խօսի:

—Նրալիգին տեսնամ քի՛, խեղճ օծ կծի, —ասաց Գէօզալը երկու ձեռքը ծնկներին խփելով, —խեղճը քի նա եա, էալ հայասզը հով ա... .

—Օծն ալ քեզ կծի, բէալքա գիւրգէան էալ, —ասաց Վարդանուշը զայրանլով և քայլերը երկիւղից լետ փոխելով, —հինչես էաս խալխին<sup>3)</sup> մատիթ փիթատալ: Բէագանամ ես ալ քեզ հէտի Եազուրի կնիզն էամ քի, խորզլամիշ ես իլիմ վերէմս . . . հայասզը լառի խորուզ կասես իլի: Լէաւ, մտքիթ պահի, հէալբաթ ախպերս կը կէալ, տես քու մէշալթ

<sup>1)</sup> Անկերպարանք. <sup>2)</sup> Քիշ ժամանակ. <sup>3)</sup> Ամրոխ.

Հինչպէս կը ճղի . . .

— Ախազօրթ ալ, քեզ ալ մին դութիմը<sup>1)</sup> տինէամ... Ա՛խ, այ կէապիւտ Աստօծ, — շարունակեց Գէօգալը աչքերը երկինք բարձրացնելով. — անքան չի մեռնամ քի՛, Վարթանուշին, Սիքոյին մինտեղ կէարմիւր զութիմը տինէամ, ետով մեռնամ ալ, դէարդըս չի իլիլ, հէար քիշեր ոտերիս ցէքերիս խինէամ<sup>2)</sup> կ'տինէամ:

Վարդանուշը կրակ կտրուեցաւ, թոնը պէս վառուեցաւ սիրտը, և մոռանալով իւր ուժի չափը յարձակուեցաւ Գէօգալի վրայ ասելով.

— Ա՛ թունդը ընդա՛ծ, ա՛ լիւզիւթ չորանալ պէարանաթ կպչի, հինչի ես մինիգ գանա էազիգ-խէալտֆ<sup>3)</sup>, ախազօրս իւշինց<sup>4)</sup> տամ... Քեզ ալ, Սիմօնիթ էալ, մարթիթ էալ, էան ուժ բալաներիթ

1) Գազաղ. 2) Հինայ որով կանալք և զամափեցիննրից չատերը մազները ներկում են. 3) Ամենասիրիկիս. 4) Հայհոյում.

մին մե՛ծ զութիմը տինէամ, ետով ալ քինէամ հարսնացուիթ ուզամ, քիցէամ ախազօրս ցոցը:

Ալդ խօսքերը այնպէս ազգեցին Գէօգալի վրայ, որ առիւծի նման յարձակուեցաւ Վարդանուշի վերայ և մի ակնթարթում գլորեց նրան ցած, նստեց վըրայ ու բոնելով երկար ծամերից, սկսեց քաշել: Հազիւ մի քանի ըոպէից յետոյ տասնեակ կանալք կարողացան առնել նրան Գէօգալի ձեռից: Թէև Վարդանուշը լաւ ծեծ կերաւ, բայց և յաջողուեցաւ նրան Գէօգալի շապիկն ու երեսը եղունկներով պատռել: Ալդ միջոցին աղաղակի վրայ փողոցով անցնող մի մարդ կարծելով, թէ մի ինչ որ փորձանք է պատահել, մանաւանդ որ թոնրի ծուխն էլ քուլա քուլա բարձրանում էր, աւելի երկիւզի մէջ զցեց անցորդին, ուստի մըտաւ բակը: Սակայն երբ իմացաւ, թէ բանը ինչումն է, սկսեց երկուսին էլ նախատել.

—Ամօթ չէ ձեզ համար, որ այդպէս իրարու անվաել կերպով անիծում էք: Միթէ մարդ մի օրիորդի համար ալդպէս վերին աստիճանի կեղտոտ հայհոեանքներ կը թափի իւր ազգակցի վրայ: Ես հաւատացած եմ, որ ձեզանից ոչ մէկը գեռ այն օրիորդին լաւ չէ ճանաչում, և գուցէ ոչ մէկներիցդ մտքով չէ՝ նորան տեսնել իւր տանը հարս: Բայց այս օր, ինձ քաջ լայտնի է, որ ձեզանից իւրաքանչիւրը խիստ աշխատում է, որ նրա կալքին տիրանալ: Աղջիկ ուզող երիտասարդները կամ հարոնախօս կանալք պիտի ընտրեն, ոչ թէ նրա օժիտը, այլ իրեն աղջկան, որ նա լինի հեզ, խոնարհ, խելօք, բնաւորութեամբ համեստ, որպէս զի ընտանիքի բարօրութիւնը չը վրդովէ, համերաշն լինի ամենքի հետ, տան ամեն մի չնչին խօսակցութիւնը, տրտունջները, որոնք կարող են ալտահել, տալօնչ<sup>1)</sup> տեքոր<sup>2)</sup>

<sup>1)</sup> Ամուսնու քոյրը. <sup>2)</sup> Ամուսնու եղբայրը.

սկեսուրի, <sup>1)</sup> պատրունի<sup>2)</sup> և այլ զէլին—ըոյնի<sup>3)</sup> հետ իւր ամուսնոյն չ'պիտի բալտնէ: Եթէ ամուսնը իմանալ և սկսի տարածալնել, այն ժամանակ հարազ պիտի հանդարտացնի նրան: Մի խօսքով այնպիսի աղջիկի պիտի ընտրել, որ ընտանիքի սուրբ և խաղաղ կեանքը դառնութեան չ'փոխի: Իսկ ինչ վերաբերում է նրա օժիտին, հասկացող ամուսնու համար աննշան պիտի համարուի, կամ էլ աչքի փուշ... Վերջապէս դուք ձեր աղջիկներին օրինակ լինէք, ձեր բերանից դուրս եկած խօսքից, ամեն մի բառից նրանք պիտի օգտուին, որպէս զի մալրեր եղած ժամանակ կարողանան ձեր օրինակին հետևելով ազնիւ գաւակների տէր և ընտանիքի հաստատ մալրեր դառնալ: Ձեզանից ամեն մէկը մի—մի ուսուցիչ պիտի լինի նրանց համար: Բայց դուք ձեր անբարոյականացնող խօսքե-

<sup>1)</sup> Ամուսնու մայրը. <sup>2)</sup> Ամուսնու հայրը.  
<sup>3)</sup> Ամուսնու աղջ բարեկամները.

ըով, և ձեր լիմար բնաւորութեամբ  
փչացնում էք մատաղ սերնդին, որոնց  
մեղքը ապագալում ձեզանից պիտի պա-  
հանջուկ . . . :

Այդպէս նախատելով նրանց՝ ամեն  
մէկին ճանապարհեց իրենց տուն:

### Դ.

Գէօգալը ոչ մի բանից երկիւղ չու-  
նէր: Նա քաջ գիտէր, որ չարախօսներից  
ոչ մէկին չի յաջողուելու նշանը յետ  
տալու: Նա վախենում էր միայն թեմա-  
կան առաջնորդից, որ չհասութեան հա-  
մար չ'ձգձգէ կամ թէ բոլորովին չ'ար-  
գելէ: Ուստի ամեն կերպ աշխատում էր,  
ինչպէս էլ որ լինի, պսակաթուղթը ձեռք  
բերէ: Սիմօնի հայրը մի քանի անգամ  
դիմեց Սրբազնին, թէև Սրբազնը մի  
քանի անգամ «չեմ» «չեմ» արաւ, բայց  
և այնպէս խոստացաւ յաջողացնել: Մար-  
կոսի (Գէօգալի ամուսինը) և Սրբազնի

մէջ կաշառքի վերաբերեալ խօսում էր  
Եաղուբ-Խալուն: Եաղուբ-Խալուն քաղա-  
քում մի հեղինակաւոր մարդ էր. բոլոր  
քաղաքացիներին իւր հինգ մատների նը-  
ման ճանաչում էր:

Մի օր նա գնաց Սրբազնի մօտ,  
որպէս զի խնդրէ նրան թեթև կաշառ-  
քով պսակաթուղթը տալ, բայց Սրբազ-  
նը «քիչ»-ով չ'բաւականանալով պատաս-  
խանեց.

— Ես գիտեմ, որ Մարկոսը մի ար-  
հեստաւոր մարդ է, հազիւ է կարողա-  
նում իւր ընտանիքը պահել, ուստի,  
որդի, ես էլ զիջումն կանեմ՝ ստանալով  
երեսուն թուման\*) և այնպիսի մի պսա-  
կաթուղթ կ'տամ, որպիսին իմ օրերով  
չեմ տուել ոչ ոքի մինչև այժմ . . .

— Զէ եա, Սուլրփազան, — ասաց  
Եաղուբ-Խալուն, ծիծաղելով, — Մարկոսը  
խեղչ ա, մին քիչ բախչի:

\*) Թումանը 12 բուբլի, — ուրիմն սուսական  
360 բուբլի.

իմ ասածըս՝ ընթէր, իսկ եթէ չէ, չես ու-  
գում, այլ ես այդ մասին խնդրում եմ  
չ'խօսէս:

Այդպէս ասելով Սրբազնը բարձր-  
բացաւ տեղից որ գնայ, իսկ Եաղուբը  
նոյն միջոցին համբուրեց նրա աջը և  
դուրս գնաց:

Եաղուբը գիտէր, որ Մարկոսը և  
թէ Գէօգալը չեն զանալ թէ իրենցից  
և թէ ուրիշներից երեսուն թուման լր-  
բացնել և տալ, բայց նա աշխատում էր,  
որ մի տասը թուման էլ ինքը օգտուի:  
Նա Սրբազնի մօտից ուղղակի եկաւ  
Մարկոսի մօտ և յալտնեց Սրբազնի պա-  
հանջը, միայն ոչ թէ երեսուն, այլ յե-  
սուն թուման: Եաղուբը երբ տեսաւ, որ  
այդ մեծ գումարի անունը Մարկոսը լր-  
սելիս զարհուրեց, խոստացաւ, թէ՝ «Հը-  
նորհիւ իմ հեղինակութեան, հինգ կամ  
տասը թուման զիջել կ'տամ»: Բայց ինչ  
կասկած, որ այն էլ շատ թուեցաւ Մար-  
կոսին:

— Զէ, որդի, չէ . . . ինչպէս բախ-  
շեմ . . . գու գիտես, որ երեսուն թումանի  
համար երեսուն հազար անդամ խօսք  
պիտի լսեմ: Դու կազմում ես, որ երե-  
սուն թումանը մենակ իմ գրապանս պիտի  
մտնի, չէ, որդի, չէ . . . նրանից Տէր-Մի-  
նասին, Տէր-Կիրակոսին էլ պիտի տամ,  
որդի, որպէս զի հրամանին ձեռք քաշեն,  
թէ ոչ, առանց նորանց չի կարելի, որդի:

— Սուրփաղան, տէրտերներին զատ  
չտաս. ես նրանց կը աղաչամ, առանց  
փողի անցկըկանալ:

— Զէ . . . չէ . . . որդի . . . ինձ կ'խար-  
տառակես, այն ժամանակ ես բոլորովին  
կարգելեմ: Դու ոչինչ չ'պիտի ասես, ինչ  
որ հարկաւոր է, ես կասեմ, ես կ'տամ:

— Դէ էալ տիւ ես իմանըմ, հինչ-  
պէս քէփթա, էանանց էալ արա, համա  
մին տա եա քի, քսան թուման առ, —  
ասաց Եաղուբ-Խալուն:

— Պարհն Եաղուբ, ես այս ըոպէիս  
գնում եմ կանսխատօրիտ, եթէ ուզում ես,

Նոյն գիշերը Մարկոսը, Գէօգալը և Սիմօնը խորհրդակցեցին, որ գիմեն ԱՀմագ-աղին և խնդրեն, որ մի քանի ամսով երեսուն թուման պարտք տայ: ԱՀմագ-աղան մի բարեխիղճ մարդ էր ճանաչուած: Նա ճանաչելով Մարկոսին իբր համեստ մարդ, մանաւանդ որ գիտէր, որ օրիորդը անշարժ կայք ունի, ուստի տուաւ պահանջած գումարը և ստացաւ երեսուն և հինգ թումանի մուրհակ:

Մարկոսը գիտէր, որ Սրբազանը յանձըն է առել և փողը տեսնելուն պէս աչքերը չորս արած պսակաթուղթը տալու է, բայց նա մի բանից էր վախենում: Նա տեսնում էր, որ ամբողջ քաղաքը թշնամօրէն է նայում այդ բանին, ամեն միջոց գործ է գնում քանդելու: Մարկոսը գիտէր, որ հայք հայք արիւնը ծծելու ախորժակ ունի, հայք հային նախանձով վերաբերուելու, թշնամութիւն անելու, վրէժինդիք լինելու ընդունակութիւն ունի: Նա քաջ գիտէր, որ եթէ

այդ երեսուն թումանի համար փոխանակ ԱՀմագ-աղայի՝ դիմէր մի հայ աղայի, չէր կարող ոչ թէ երեսուն թուման, այլ նոյն իսկ երեք թուման էլ ստանալ, ուստի Մարկոսը հայք թշնամութիւնը, մանաւանդ տեղացիների նախանձը և կեղտոտութիւնը ի նկատի ունենալով, բարուոք համարեց նախ քան պսակաթուղթ ձեռք բերելը՝ աղջկայ օժիտից մի մասը ստանալ, այնուհետեւ չարախօսութիւն չեն անիլ և միանգամից բերանները կ'փակուին...

Գէօգալը իւր նպատակին հասաւ. խնամիները խոստացան միւս օրը ուղարկել և վճռեցին, որ անպատճառ երկու շաբաթից յետոյ հարսանիքը սկսեն:

## b.

Միւս օրը գիւղական սալերով ցորենը և կահ կարասիքի մի մասը բերին Մարկոսինց տուն: Նոքա ամենայն ա-

գահութեամբ տարան պահեստ և սալլապաններին մի մի բաժակ օղիով, խալլաթով<sup>1)</sup>, ճանապարհեցին գիւղը:

Թէ Մարկոսը և թէ Գէօզալլ այլ ևս հանդիսա էին զգում իրենց: Նրանց միակ ցաւը պատկաթուղթն որը էր, վերջացած էին համարում, որովհետեւ երեսուն թումանը արգէն «բողչի-զաթը մն» դրած էր:

Անցաւ ևս մի քանի օր:

Մարկոսը Եազութ-Խալուկին խնդրեց, որ կրկին գնայ Սրբազնի մօտ պատկաթուղթի համար խնդրելու: Եազութ-Խալուն գնաց: Նա մի քանի դինետներ մտնելուց և ամեն տեղ մի-մի «ռումկալ» «ջեջի» օղի խմելուց յետով վերադարձաւ Մարկոսի մօտ.

— Ախսէր, չիլիմ էալի, կասես Սուրբ-փաղանը շիթ եղ ա ծախըմ խալխին, հինչքան միննէաթ<sup>2)</sup> արի, բէալքէանամ

<sup>1)</sup> Նուեր. <sup>2)</sup> Խնդրեցի.

երեսուն թումանով կլօխ կէալ-չկէաւ, ախրը ճարս կտրուած հինգ թուման ալ եւալացուրի բէալքանամ վիզով առնի-էալի վիզով չի վեկալաւ: Ախրը տեսաւ քի, կլօխը շատ ամ գէանդ տանըմ, էալ ճարը կտրուած տասը թուման պակասացուրեց: Հիմի էալ, Մարկոս, տեղը չի, շիւտ արա, քառասուն թումանը հէազիրի<sup>1)</sup> քի, եօխսանամ<sup>2)</sup> մարգը մազար<sup>3)</sup> տիւս կը կէալ . . .

— Զէ, Եազութ-Խալու — ասաց Մարկոսը, — չէ, երեսուն թումանան մին կոպէկ եւալ ոչ ունամ, ոչ ալ քի տալու ամ: Էագանէամ<sup>4)</sup> չի նեղանաս, խնթըըմ ամ էաս քիշեր երկու հոքի մին տեղ քինէանք, բէալքանամ<sup>5)</sup> մի թէահէար անանք, եօխսանամ փողի հետի շատ մէաթալթուն<sup>6)</sup> կ'քաշանք:

— Ես էալ համանչըմամ քինէալլ, — ասաց Եազութ-Խալուն, — էագանէամ

<sup>1)</sup> Պատրաստիր. <sup>2)</sup> Թէ չէ. <sup>3)</sup> Խոչնտոտ. <sup>4)</sup> Եթէ. <sup>5)</sup> Գուցէ. <sup>6)</sup> Պակասութիւննեղութիւն.

քառասուն թումանով կ'խրկես, ես մէանէագ համ քիքինէամ, համ ալ պատկաթուղթը կ'պերամ :

Այդ խօսքերը Մարկոսին երկմտացրին: Նա հասկացաւ, որ մի ինչ որ գաղտնի բան կալ, որ Եազուբ-Խալուն մենակ է ուզում գնալ, ուստի գիշերը Մարկոսը և Սիմոնը միասին գնացին Սըրբազանի մօտ: Նոքա Սըրբազանի հետ երկար ու բարակ խօսելուց յետոյ իմացան, որ տասը թումանը միջնորդը իւր համար է ուզել: Սըրբազանը խոստացաւ պսակաթուղթ տալ, իսկ Մարկոսը երեսուն թումանից կէսը ներկալումս տալ, իսկ կէսը հրամանը ստանալիս: Այդպէս էլ կերջացաւ. նա տասնը հինգ թումանը տուաւ և աջը համբուրելով՝ դուրս եկաւ:

Q.

Այժմ գառնանք գէպի Եազուբ-Խալուն և Սըրբազանը: Առաջինը երբ լսեց

կերջինի և Մարկոսի համաձայնուելը, իսկոյն գնաց Սըրբազանի մօտ և սպառնալով ասաց.

— Սուրբազան, հաւատացի՞ր Քիրիստոսին, էագանէամ տիւ նրանց պսակաթուղթ ես տուալ, ես Խչմիազին տեսպէծ ամ տալու: Տիւ իստեղ նստալ ես օրանք քանդիլի՞, եօխսանամ օրանք պահիլի՞: Կարքիթ զգալ, էագանէամ նա ժամըմը փսակուեցաւ, ես ալ թուրքանուլիւ էամ, բէագանէամ իրեքինչի պորտըմն ալ փըսակ կիլի՞ . . .

— Այ՛ որդի՞, երեք աստիճան չէ, շատ է . . . ինամիներ են, ազգականներ չեն . . .

— Դէ, էալ տիւ ես իմանըմ. — ասաց զալրանալով Եազուբ-Խալուն. — էանանց կուտերը ծեր հաւերի առաջին շաղ տոնը, ինձ Եազուբ կասան, Եազուբ, քեզ պէս քսան երիսկոբոս, հառուր տէրտէր, հազար ալ տերացու ամ յեղի արալ . . .

Այդպէս ասելով դուրս եկաւ բակը:

Սրբազնը մի քանի անգամ նրա լետեից կանչեց, բայց նա մի քանի անգամ իրարու լետեից կրկնեց միատեսակ խօսքեր, թէ՝ «տիւ իլի Սուրբազն, ես վիշտ Եաղուք, տիւ իլի Սուրբազն, ես իլէտ Եաղուք, տեսնանք հով, հռւմ, հինչ կանի»...

Սրբազնը՝ մնացել էր շուարած: «Ի՞նչ անեմ, — ասում էր ինքն իրեն, — եթէ մի քանի մանէթ բերանով կ'գցեմ, այն ժամանակ վատ կ'սովորի, այնուհետեւ մի բան լինելիս, շարունակ կ'գալ զահլաս կ'տանի, որպէս զի մի քանի արձաթ ստանալ, եթէ չեմ տալ, ով գիտէ, ինչեր կարող է լառաջանալ»... Վերջապէս ծառալին ուղարկեց Մարկոսի լետեից:

Ծառան գնալուց մի ժամ լետոյ, Մարկոսը նստած էր առաջնորդաբանի մեծ դահլիճի բազկաթոռի վրայ, իսկ Սրբազնը նստած էր գրասեղանի առաջ և մի տէրողորմեա ձեռին՝ շարունակ գըցելով մտածում էր և ստէպ ստէպ ճա-

կատը մատներով շփում: Վերջապէս մի քանի ըոսկէից լետոյ, նա տերողորմեան դրեց մի կողմ և լուզջ հայեացքը գցեց Մարկոսի վրայ ու ասաց.

— Որդի՛, ես զարմանում եմ այն մարդի վրայ, ձեզնից առաջ նա էր աշխատում, նա էր ինդրում, բայց այսօր ուզում է քանդել, սպառնում է ինձանից բողոքել իշխանութեան...

Դեռ Սրբազնը խօսքը չ'վերջացըրած, Մարկոսը անհանգիստ կերպով հարցրեց:

— Հով ա նա, Սուրբազն, հով... հով ա... քանդողը, հինչեր էր ասըմ...

— Ո՞վ պիտի լինի, որդի ձեր բարեկամը, է...ն Եաղուք էք ասում, Մաղուք էք ասում... էլ այսօր բան չ'մնաց, որ չ'խօսի, վերջումն էլ գնալու ժամանակ ճանապարհում չ'գիտեմ ինչ մրթմըթալսվ գնաց, կարծեմ հայհոյում էր ինձ Զէ որդի, ես չեմ կարող նրա բերանը փակել, ինձ նրա ճանկերից ազատեցէք,

կամ էլ ձեր փողը լետ ստացէք:

Մարկոսի գոյնը թռել էր, չ'զիտէր  
ինչ պատասխանէր, խեղճը հենց աչքերը  
լայն բացած դիտում էր Սրբազանի դէմ-  
քը: Թուքը հազիւ էր կարողանում կուլ  
տալ: Վերջապէս թոթովելով ասաց.

— Սուրփազ... ան, փողը ցե՛... քիժ  
պահիր, մի վախիլ ես էաս քիշեր նրան  
կը տեսնամ, բէալքանէամ մին թահարի  
քիցէամ... մի քանի մանէթով ըռեխը  
կապամ...

Մարկոսը աչքերը սեացած բարձրա-  
ցաւ տեղից, ամենախոնարհ կերպով գը-  
լուխ տուաւ, Սրբազանի աջը համբուրեց  
և դանդաղ ու թոյլ ոտները սկսեց շար-  
ժել դէպի փողոցի դուռը: Խեղճ մարդը  
իրեն կորցրել էր, չ'զիտէր ի՞նչ աներ,  
ում դիմէր, կամ ում միջնորդ գցէր, որ  
եսամոլ ու իրասածի եաղուբին կարգի  
բերէր: Նա մի քանի ըոպէից լետով հա-  
սաւ իրենց տուն և սկսեց Սրբազանի  
հաղորդած տիտոր նորութիւնը պատմել

Գէօգալին և Սիմօնին: Թէև սկսզբից  
Գէօգալը կատաղեց, ձախնը բարձրացրեց  
գլխին, սակայն Մարկոսի ապտակը նրան  
մեղմացրեց և հասկացրեց, որ քաղցրու-  
թեամբ պիտի գրաւել Եաղուբին, թէ չէ,  
աւելի ևս պիտի հասկառակուի: — Իսկ  
Սիմօնը, — կ'հետքը քրութիւնը...

Սիմօնը մի նորահաս երիտասարդ  
էր, դեռ աշխարհքի չարն ու բարին չէր  
հասկանում, գեռ չ'զիտէր ի՞նչ է գլխա-  
ւորապէս ամուսնութեան նպատակը: Նա  
կարծում էր, որ քաղցրութիւնը միայն  
նորա մէջն է կայանում, որ նոր շորերը  
հագին, մի աղջիկ պիտի իւր հետ խօսի,  
ծիծաղի, հանաքներ անի և այլն... Նա  
միայն լսում էր Գէօգալի հրամանը, ի՞նչ  
որ սա հրամայում էր, Սիմօնը պարտա-  
ւոր էր կատարելու: Նրա բնաւորութիւ-  
նը մասամբ կանացի լատկութիւն ունէր:  
Նա ընկերներ չէր ճանաչում, չէր սիրում  
դաշտերում, սարերում և ծաղկազարդ  
ձորերում զբօննել, զուարծութիւններ

տեսնել։ Ազատ ժամերում նա գուլքա-  
ներ կ'գործէր, երեսը իշխների և թաշկի-  
նակների ծալքում տառեր կ'գրէր և երե-  
խաների հետ՝ լինի աղջիկ, թէ տղալ՝ կը  
խաղար։

## Է.

Հարսանիքի հրաւերները արդէն ու-  
ղարկուած էին հեռու քաղաքներ, որտեղ  
ապրում էին Մարկոսի բարեկամները։  
Նոքա պատրաստում էին գալ հարսա-  
նիք։ Բայց ինչպիսի անհամութիւններ  
առէք, չառաջացան երկու խնամիների,  
Եաղուբ-Խալուի և Սրբազնի մէջ։

Եաղուբը ոչ թէ տասնեակ թուման-  
ներ չէր պահանջում, այլ ևս չէր ուզում,  
«գէօգէարչինի բալին» Մարկոսենց տա-  
նը հարս տեսնել…

Ըսթերցողը արդէն գիտէ, որ Եա-  
ղուբը շատ իրասածի բնաւորութեան  
տէր մարդ էր։ Նրան Սրբազնի և Մար-

կոսի կողմից առաջարկեցին քսան թու-  
ման, տասը Սրբազնից խոկ տասը՝ Մար-  
կոսից։ Բայց մըթէ հակառակ Նիրուան-  
ցին իւր եսը փողի կ'մատնէր։ Առհասա-  
րակ Նիրուանցիները ոչ թէ մի պսակ,  
այլ և կրօն, աղօթատուն, ուսումնարան  
և հասարակական շահեր անգամ չեն  
խնալիլ իրենց խօսքը առաջ տանելուն  
ոչ թէ եսի, որ նշանաւոր «եսը» մասամբ  
ինքնասկրութեան խնդիր է։ Բայց նրանք  
ինքնասկրութիւնից գրդուած չեն տ-  
նում, այլ բաւական է, որ նրանց երե-  
սին մի քանի շողոքորթիչ խօսքեր նե-  
տես, այնուհետև նա պատրաստէ (շատ  
աննշան բացաւութեամբ) անարգ գոր-  
ծիք գառնալ քո ձեռին, և արդէն Եա-  
ղուբ-Խալուն անարգ գործիք էր գառել  
Վարդանուշի եղբայր Սիքոյի ձեռին և  
պատրաստ էր հակառակ գէպքում, պար-  
սկանալու, եթէ առաջնորդը բարեհա-  
ճէր պսակաթուղթ տալ . . . արժէ ակա-  
նատես լինել Նամախեցուց՝ հայերի թուր-

Հետեւ հաշուի ժամանակ թէկուզ երեց-  
փոխը ուղարկեր էլ կուլ տուած լինի, ժո-  
ղովրդի շահերը ոտնատակ տուած լինի,  
նոցանից ոչ մէկը բերան չի բացիւ, մէ-  
շելով, որ անցեալ կիւրակի «զազանքա-  
բաբի», «կարասի-ձուկը» և «սաբէզա-  
զորմիով» փլաւ է կերել, և համոզ-  
ուած է, որ եթէ նրա կեղտը հրա-  
պարակ հանէ, իր կողմից տըմարդու-  
թիւն արած կը լինի աղ հացը՝ բողկ  
և հաց կանէ, մի խօսքով Շիրուան-  
ցու ասած՝ ն ա մ ա ր դ ո ւ թ ի ւ ն է:  
Թուրքերը մօլլա հաստատելիս մի շա-  
բաթ առաջ, իրենց թիկնածու համարող-  
ները, իւրեանց ո ա հ ա մ ա տ ի գ հօր  
լիշտառակին խէլքաթ են բաժանում, կա-  
րելոյն չափ ճոխ, որ իրենց ընտրեն և  
հաստատեն: Խոկ մալականները, բ ո ր-  
շ է ջուրը աւելի շատ են անում և գը-  
դալները մեծ, որպէս զի առանց բացա-  
ռութեան բոլորին հրաւիրեն: Խոկ այ-  
նուհետեւ. — այդ ինքը լաւ գիտէ, ինչ-

քերի և ոուս աղանդաւորների ժողովնե-  
րին, մանաւանդ հայերը երեցփոխ ջոկե-  
լիս, մալականները փոալ ընտրելիս և  
թուրքերը մօլլա հաստատելիս: Հայի ե-  
րեցփոխը, երբ տեսնում է, որ տարուայ  
հաշուատեսութեան ժամանակից մի շա-  
բաթ է մնում, նա հրաւիրում է իւր  
տուն քաղաքի առաջնակարգ և հեղինա-  
կաւոր մարդկանց ճաշի: Այնտեղ հիւրե-  
րը սկսում են ուտել, խմել և զուարձա-  
նալով տան տիրոջը զանազան տեսակ  
գովասանական խօսքերով բարձրացնել  
մինչև Ղզղալասի-ի<sup>\*)</sup> գլուխը, և այնու-

<sup>\*)</sup> Ղզղալասի նշանակում է աղջկայ բերդ. — Երբ Շիրուանի գաւառին տիրապետում էին պարսկական խաները, այդ խաները ուրիշ պա-  
ւառի<sup>է</sup> խաների հետ կոռուկիս, մեծ թուով գե-  
րի՝ աղջիկներ բերելիս, կթազցնէին այդ ահա-  
գին սարի խոցերում, որի համար մինչև այսօր  
«Ղզղալասի» անունն են տալիս: Սարը գտնուամ  
է քաղաքից երկու վերստ հեռաւորութեան վը-  
բայ, գէպի հիւմիս:

ոլէս վերաբերուել ժողովրդի հետ։ Վեր-  
ջապէս Նիրուանի ազգաբնակութեան  
վայրենի և վնասաբեր եսից, Եազուբը  
նշանաւոր տեղն էր բռնում, և որի շը-  
նորհիւ պատկանթուղթը չ'աջազուեցաւ  
ձեռք բերել . . .

Յորենը գտնւում էր Մարկոսի տա-  
նը. — Երկու շաբաթ ժամանակը երկու-  
ամիս էր դառել, — խնամիները անհան-  
գըստացնում էին Մարկոսին, Գէօզալին և  
Սիմօնին։ Հեռու քաղաքներից բարեկամ-  
ները թուով երեսուն հոգի մեծ թէ փո-  
քը, շաբաթից վեր էր, որ լնկած էին Մար-  
կոսի գլխին, որոնց ծախսը անտանելի  
էր։ Իսկ Վարդանուշը իրեն նպատակին  
հասած համարելով, ամեն օր ձեռներին  
հինա դրած անցնում էր Գէօզալի առա-  
ջից, բացի սրանից, նաև անընդհատ աշ-  
խատում էր Եազուբին գրգռել Մարկոսի  
և նրա հիւրերի դէմ, որպէս զի կուտեն։

Վերջապէս մի օր նոյն սայլերով,  
որով ցորենն էին բերել, կրկին խնամի-

ները եկան Մարկոսենց տուն, որպէս զի  
բերածը լետ տանեն։ Մարկոսենքը ընդ-  
դիմացան ցորենը տալ, բայց գիւղացիք  
ստիպեցին տալ, գիմելով ոյժի։ Խեղճ  
Մարկոսը կամենում էր գիմադրել, բայց  
օգնական չունէր։ Քաղցած փեսաները,  
որոնց մի քանի բարեկամները նոյն թա-  
զումն էին գտնւում, աւելի էին քաջա-  
լերում «գէօզէարչինի - բալի» բարերար-  
ներին . . .

Նոքտ մի քանի բոպկէում սայլերը  
բեռնեցին ու ճանապարհուեցին գիւղը։  
Այնուհետև բռնեց Սրբազանի և Մար-  
կոսի կուլը։ Առաջինը ասում էր թէ,  
«տասնըհինգ թումանից հինգ թումանը  
տուել եմ բարեգործական նպատակի,  
ստացիր մնացեալը։ Իսկ եթէ բոլորը կը  
պահանջես, այն ժամանակ միանգամայն  
կը մերժեմ։» Իսկ վերջինըս պնդում էր  
արտասուելով. թէ՝ «պարտք ամ առալ  
Ահմադ - աղիան, պարտքս բիդի տամ . . .  
Սուրփազան, խեղճ ամ . . .

Իսկ Սիմօնը շարունակ փողոցներում  
և թէ տանը միշտ թուրքերէն երգում  
էր մինչև վերջին շունչը.

«Քէօգէարչինը բիրդան ուշտի,  
Մարդըմազարն գէօղի չխտի,  
Իլէած—չ'իլէածմ ալդան չխտի,  
Ախրդա բորջմ, չ'խտի...»

«Ղարթանուշն գիւլի եանսուն,  
Օթ թութսուն գիւլի եանսուն,  
Մէանի գէօգէարչիննէան էլէանըն,  
Ազգընդա դիլի եանսուն:  
«Սուրփազան եղի փուլումնան,  
Աթամ չխմադի գիւլիւմնան.  
Ախրդա դուդըմ դաշտըմ,  
Շիրվանն եալթաղ դիլիննան»...»



Վ Ե Բ Պ.

ՃԱՆՈԹՈՒԹԻՒՆ.

Այն բոլոր «ա» տառերը, որոնց առաջ գրքոյկիս մէջ «է» տառն է զրուած, պէտք է հնչել թրքական «ալիֆ» տառի նման։ Մենք այդպէս արինք այն պատճառով, որ այդ աւելի մօտ է «ալիֆ»-ի հարազատ արտասանութեան, իսկ (՝) նշանը, որ ոմանք զնում են «ա» տառի վրայ «ալիֆ»-ի հնչինը ստանալու համար, մենք շը գրինք, որովհետև սկզբունքով հակառակ ենք գրան, իրեր մեր լեզուի մէջ շընդունուած մի նշանի։ Ընթերցողների ներողամտութիւնն իմ հայացում գրքոյկիս մէջ պատահող տպագրական սխաների համար, ի նկատի ունենալով գաւառաբարբառի տպագրութեան գործի գժուարութիւնը։

Ս. Մ. Գալապաշ:

4845

Հայաց -

2013



Գինն է 10 ԿՈՊ.

Գուել յանկացողները թող գիտեն  
մեզ հետեւու հասցեսի՝  
Բայ, Ծմբատ Մ. Ղարաբ